Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

XV. 5

89(2)
Ь-2

89199
2 30

ԵՐԳԱՐԱՆ

ZUMUSUYA
ԼԵՀՏՊԱՆԻՆ
ԼՈՍԱՆԳԵԼԻՍ
ԼՈՍԱՆԳԵԼԻՍ
ԼՈՍԱՆԳԵԼԻՍ
10267

ԵՐԳԱՐԱՆ

Աշխատասիրութեամբ Նախնի Երգչաց

Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐՁԱՆՈՅՆ

1865 — ՌՅԺԴ Ի ՎԱՐԱԳ

Թէ ձայն ունիս դու կակուղիկ,
Նա երգս ասա դու անուշիկ,
Թէ անկերպ է եւ անճոռնիկ,
Թող այլքն ասեն արա մատիկ։

ՄԵՏ ԳՐԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆԻ
1466

Ը. Օ. Դ.

Այս ժողովածու աշխատասիրութիւն ձեզի կնուիրեմ ոմ Հայաստանի պանդուխտ բեռնակիր զաւակունք, ձեզ, որ Ն. Պոլսոյ կամ այլ եւ այլ քաղաքաց մէջ բեռ շալկելով Ուղղական, Սեռական կ'կարդաք. ձեզ, որ աղքատութեան, չարքաշութեան դէմ կմրցիք, ձեր ուրիշ եղբայրց պէս գաղթականութեան չէք զլջանիր եւ զանազան քաղաքներու մէջ պանդուխտ երթալով արիւնախառն քրտամբ կպահպանէք դեռ եւս ձեր ընտանիք։

Ձեզ կնուիրեմ այս ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԻՆ ԵՐԳԵՐ (որուն մէկ քանի երգեր Կոուց սուրբ Անապատայ հին երգարանէն եւ միւս մնացածներ այլ եւ այլ հին երգարաններէ քաղած եմ) ձեր ցաւած սրտեր մխիթարելու եւ կամ ձեր ընթերցասիրութեան ախորժակը ընդարձակելու համար։

Եթէ ձեզանից կամ ազգայիններէն ընդունելութիւն մը գտայ, այս տեսակիս պէս պիտի շարունակեմ մինչեւ վեց կամ եօթներորդ տետրակներ։

Ազգէն Ֆ. Ա. Ս.
Ս. Ղ. Ս. Ղ. Ս.

ՄԻՍ ԻՆԹԱՐՈՒԹԻՒՆ

Ա. ԲԱԶԱ

ԸՆՍՈՒՄԸ

Ինձ նման դու լալոտ աչօք ընդէր ես՝
Մի՛ լար, հոգիկ, մի՛ լար այդպէս խղճալի.
Մի՛ թէ կարօտ ունիս սրտիդ, լացերես
Մի՛ լար, ճանուամ, մի՛ լար այդպէս խղճալի։

Սրդով խոցեալ եւ վարանմամբ տիրեալ ես
Աւաղելով հեծեծանօք հառաչես.
Սեւ ես հագեալ՝ ի տարակոյս նստեալ ես,
Մի՛ լար, արեւ, մի՛ լար այդպէս խղճալի։

Որպէս զքու յաւերակի բնակես
Քան զՀաւալուս թռչուն անշուք անշէն ես.
Իբրեւ Ջասիդն եւ Ներսայն հեկեկես,
Մի՛ լար, հոգի, մի՛ լար այդպէս խղճալի։

Ի՞նչ եղեալ երկօք վշտաց ցաւոց ծնանես
Աղիողորմ ձայնիւ ողբոց յօրինես.
Ի կարօտէ սրտիդ թառաչ արձակես,
Մի՛ լար, արեւ. մի՛ լար այդպէս խղճալի։

Քեզ վայելուչ չէ լալը՝, դու էր կ՝ կոծես.
Քեզ վայելէ խնդալ, ընդէր աշխարես.
Քեզ վայելէ բեհեզ, էր սեւ արկանես,
Մի՛ լար, սիրուն, մի՛ լար այդպէս վշտալի։

Ի նեղութեան կարօտանաց դեղնեալ ես
Եւ ի վշտաց տրտմութենէն նիհար ես.
Արտասուաթոր աչօք ուժգին մըընջես,
Մի՛ լար, հոգի, մի՛ լար այդպէս խղճալի։

Այսուհետեւ մի՛ լար, հոգիդ կու սիրես.
Սրբեա զարտօսր աչացդ, թէ զիս կու սիրես.
Ուրախացիր եւ զուարճացիր, թ՝ Անձ կու սիրես,
Մի՛ լար, սիրուն, մի՛ լար այդպէս միշտ անքուն։

Սիրով տամ քեզ խրատ, թէ ինձ կու լսես,
Ի բաց՝ լեր լալոյդ, թէ միտ կու դնես.
Հոգւոյ մարմնոյ խնդալ պարտ է թէ գիտես.
Մի՛ լար, Սոխակ, մի՛ լար այդպէս վշտալի։

Գովասանք Երգնէ Ե՛ Երգրէ։

Ծառ կասեն մէկ տունկ էր
Ճիւղ հազար յիւրմէն ելանէր,
Էն ճիւղ շատ պտուղ կուտէր,
Ի՝ աղաւնին վերայ կթառէր։

Հոն էլնէր այգիքն փռուէր

Իւր հոտէն ինքն էլ զմայլէր,
Յոլ տեղ աղէկ մանուկ կէր,
Գայր քաղէր, ի գլուխն զարնէր։

Այն ճիւղն ինչ պտուղ չիտէր,
Ի հպարտ մարդըն նմանէր.
Ոչ մարդ յիւրմէն պար (1) ուտէր,
Ոչ մարդ կայր ի հովին պառկէր։

Այն ճիւղն ինչ պտուղ կուտէր,
Ի հնազանդ մարդըն նմանէր.
Շատ մարդ յիւրմէն պար ուտէր,
Շատ մարդ գայր ի հովին պառկէր։

Թէ զհպարտ մանուկն ասեմ,
Ինքն ի բարկ կրակ նմանի.
Յոր տեղ որ նըստած լինի,
Իւր նըստած տեղըն կիրիցի։

Թէ զհնազանդ մանուկն ասեմ,
Ի գարնան կանաչ նմանի.
Խիտ գարնանային ժամին
Զանազան ծաղկօք բուսանի։

Թէ զհպարտ մանուկն ասեմ,
Ինքն ի պղտոր կէօլեր (2) նմանի
Ոչ մարդ յիւրմէն ջուր խմի

---

(1) Ախորժակ։ (2) Լիճ։

Ոչ մարդ յիւրմէն ջուր տանի։

Թէ զհնազանդ մանուկն ասեմ,
Ինքն ի պաղ աղբիւր նմանի.
Շատ մարդ յիւրմէն ջուր խմի
Շատ մարդ յիւրմէն ջուր տանի։

Թէ զհպարտ մանուկն ասեմ
Ինքն ի սեւ ամպ նմանի.
Ամպի ու կարկուտ թափի,
Որ ամէն առուս պղտորի։

Թէ զհնազանդ մանուկն ասեմ,
Ինք ի բարկ արեւ նմանի.
Յառաւօտեան պահուն ծագի,
Ծագի, ամպերք փարատի։

Երկինք գետին եղբայր են,
Մէկ քանց մէկ բան ունի աւելի.
Թէ զերկնից բարձրութիւն ասեմ,
Նա գետնի տնեարն աւելի։

Թէ զերկնից աստղունքն ասեմ
Նա գետնի ծաղկունքն աւելի.
Թէ զինն դաս հրեշտակք,
Նա գետնի սուրբերն աւելի։

Թէ դառնամ զերկինք գովամ

Նա գետնի խաթըր կումնայ.
Թէ դառնամ գետին դուքամ,
Ստեղծօղին խաթըր չի մնար։

Երկինք գետնին ասաց
Բանմ ունիմ քանց քեզ աւելի.
Չիմ ցօղն որ կտրեմ,
Քո ծաղկունք ոչպէս կու լինի։

Գետին երկնուց ասաց,
Ստեղծողի մունաթն աւելի.
Եթէ ծովերացս ակն խցեմ,
Քո անձրեւն ուստի կուլինի։

Երկինք գետնին ասաց
Բան ունիմ քանց քեզ աւելի.
Հանեմ բարկ արեւ ծագեմ
Քո ծաղկունքն ամէն թարշամի։

Գետին երկնուց ասաց
Ստեղծողի մունաթն աւելի,
Հանեմ յանդնդոց աղբիւր
Իմ ծաղկունքն ամէն կու չլուսի։

Երկինք գետնին ասաց
Բան ունիմ քանց քեզ աւելի.
Ամպեմ ու կարկուտ թափեմ
Քո ծաղկունքն ամէն վայր թափի.

Որոտամ կայծակ թափեմ
Քո ծաղկունքն ամէն խշրուի.
Գոռամ վէր քեզ ձիւն թափեմ,
Քո ծաղկունքն ամէն ծածկըվի։

Գետին երկնուցն ասայ,
Ստեղծողի մունաթն աւելի.
Անչափ սար ու ձոր ունիմ
Գայ կարկուտդ ի՞նչերքս դիղվի։

Անչափ բարձր քար ունիմ,
Գայ կայծակդ ի նեղս անցանի.
Անչափ առտ ու դաշտ ունիմ
Գայ քո ձիւնն ի նայ սփռուի։

Հանեմ անդնդոց շոգելք,
Սառնաման ձքնելըդ հալի.
Հալի ու գետեր լեցուի,
Այլ ի ծով երթայ դատարի։

Բուսնի առաջ ճան ծաղիկ,
Նախաստեղծ Ադամնմանի.
Բուսնի պալասան ծաղիկն,
Որ Միւռոն յիւրմէն կելանի.

Բուսնի անթառամ ծաղիկն,
Որ ի Մարիամ սուրբ կոյս նմանի.
Բուսնի նոնոֆար ծաղիկ,

Կուսածին Յիսուս նմանի.

Բուսանի համասփիւռ ծաղիկ,
Եօթն տակ երկինք նմանի.
Բուսանի բրաբիոն ծաղիկ,
Զոր կերպեան աթոռ նմանի.

Բուսանի գինեբբուկ ծաղիկ,
Գաբրիէլ հրեշտակ նմանի.
Բուսանի ըռևհան ծաղիկն,
Քառաթեւ սուրբ խաչ նմանի։
Հազար եւ հազար դուն ծաղկունք
Ամէն իմ հոգէս կու լինի։

Երկինք գետնուն ասաց,
Բանմ ունիմ քանց քեզ աւելի.
Լոյս արեւ յիսնէ կելանի.
Ուրթ դաս հրեշտակ յիս փառաբանի։

Գետին երկնուց ասաց,
Սուրբ Աստուծոյ մունաթն աւելի.
Առաքեալք ու Մարգարէք իմն են,
Դատաստանն ի յիս կուլինի։

Աստուած ողորմի ասեն քո փիլիպին,
Աշըղ Տալիպին.
Որ զերկինք ու գետին գովաց
Հաբաթ օր ի լոյս կիրակին։

Տաղ ուրախութեան։

Գիրամ եմ գլուխ խազերով
Մէջ լցեալ եմ շաքարով
Իմ սիրելեաց շատ բարով
Այսօր ուրախութեան օր է
Թասերն կարգաւ բոլոր է։

Սեղանս լի է պաշար
Ընդարձակ իմ նստած շար վէ շար
Թասերն է մարգարտաշար։ այսօր՛

Սեղանս լի բոլոր հաց
Տապկած հաւերն է դրած
Գինին արաղն է խորաց (1) այսօր՛՛։

Թասերն է ավան չինի
Մէջըն լցած կարմիր գինի,
Խմօղաց անուշ լինի,
Ով չխմեց թող քնի,

Տաղ Բարեկենդանի։

Արեւելք առաջին,
Եւ արեւմուտք օրըն վերջին,
Նստեալ հայիս դէմ փառչին,

(1) Դիպէղ։

Եւ զանազան իլին խըրշին,
Բարեխօսեայ մեծ կարասին
Որ պատուական է խիստ գինին։

Բարեհամ է գինին,
Եւ յոյժ բարուք սեղան իլին.
Դէր գէր հաւեր զանազան,
Եւ ըզ կարաք խառն ընդ մեղրին.
Բարեխօսեայ մէծ կարասին,
Որ պատուական է խիստ գինին։

Գոյն ըզգոյն լաւ մազա,
Եղով եփած ձուկն թազա.
Խումար մարդոյն պող պտուկ,
Քացխով բռնած սիրուն պէզա։ Բարե"

Դարձեալ նայիր թէ ինչ կայ,
Հալվա պօրակ՝ եւ փահլաւա,
Գառըն դըրած գավամա,
Եւ փորն իլին պըհարլամայ։ Բարե"

Երանեալ հարիսայ,
Եւ պատուական քալափաչայ,
Պամիր թանխուս՝ ասիտայ,
Յոլով եփած փիլաւ զարտայ։ Բարե"

Զարդարեալ է սեղան,
Ղապուռ թազա մսով եփման,
Ցեղ ու ցեղ պիպարով,

Եւ քիշմիշովքն միաբան ։ Բարե՞

Թագաւոր է խորովուն,
Եւս առաւել գեղեցկագոյն,
Կարմրեալ է գոյնզգոյն,
Թագ եւ պարծանք է սեղանոյն ։ Բարե՞

Ժողովեալ ի սեղան,
Արձակեցան ի խորովուն.
Ուտեն ըմպեն անուշ գինոյն,
Եւ փառաց տան անճառելոյն ։ Բարե՞

Ի կաքաւուց բերեալ միս,
Ի սալամուց լաւ նաղտայիս.
Աղաւնոյ թող մեզ ընթրիս.
Յաճոյ թուեցաւ բազմականիս ։ Բարե՞

Լրուեցին միաբան,
Եւ ննջեցին ամենեքեան.
Երբ որ քնան եւ զարթան,
Փութով հասաւ գառն եւ կըթխան ։ Բարե՞

Խընդացին եւ զուարճացան,
Յորժամ տեսին զդաւաթն ի բան.
Նստան բոլոր ի սեղան,
Խմեն զարաղն ուրախանան ։ Բարե՞

Ծաղիկ բերեալ ի սեղան,
Վարդ մանուշակ եւ ըռեհան.

Ղարանֆիլ նուռնուֆար,
Սմպուլ նարկիզ եւ շուշան։ Բարե՞

Կարմրացեալ գերագոյն,
Կակաչ բերեալ զվայրենին.
Մանուշակ դիւր պարանոց,
Քաղցրաոտնակ հոտով իլին։ Բարե՞

Հազար վարդն այլ բոլոր.
Գունով դեղին եւ աղուր,
Սոկոնին հետ ժիաւոր,
Ի մէջ նոցա փառաւոր։ Բարեխօսեա՞

Ձեւացան ի սեղան,
Պայծառ տեսլեամբ աննման.
Արձակեցին հոտն անոյշ,
Քաղցրացուցին զքիմբս մարդկան։ Բարե՞

Ղամբարոյ նման վայլին,
Պայծառ գոյնով մէջ սեղանին.
Նոքայ առեալ վայելին,
Եւ փառս տան պարգեւողին։ Բարե՞

Ճրվաթակ արարին,
Ը զճրնճղուին մեծ ՝ ահագին.
Բերեալ յառաջ զենեցին,
Ջփետուրն յիւրմէ կողոպտեցին։ Բարե՞

Մեծամեծք խորհուրդ առեալ,
Բերեալ զսաղն ընդ արօսին,
Մանրամասն կտրատեցին,
Եւ ճընճղկան փորքն լցին։ Բարե խօսեա՞"

Յետոյ սինի կազմեցին,
Եւ գոյնզգոյն զարդարեցին.
Բերեալ յառաջ մատուցին,
Մէջ սեղանին բազմեցուցին։ Բարե՞"

Ներոգեցաւ նոր սեղան,
Յորժամ եհաս ճնճղուկն ի յայն.
Քառասուն մարդ միաբան,
Ջմէկ թեւն կերան յագեցան։ Բարե՞"

Հնուհեցին ի մրգերացն.
Յառաջ բերեալ մատուցին,
Գեղեցիկ եւ զանազան,
Ներոյ սեղան զարդարեցին, Բարե խօսեա՞"։

Ուղիղ բոլոր եւ աղուոր,
Սպիտակ կարմիր միաւոր,
Համով հոտով լի խնձոր,
Մէջ մրգերացն է թագաւոր։ Բարե՞"

Զամիչ կթուն եկեալ շատ,
Արմաւ եւ թուզ մէկ մէկ հատ.
Զահրաթուն եւ լապլապուն,

Խառնեալ ի հետ նոցա միշտ։ Բարե՞

Պնտուկն է լի ամանների,
Եւ նուշն ի հետ անուշ համով.
Յրատուխիկն է մազթախած,
Քան զամենայն մրգերն յոլով։ Բարե՞։

Զանազգ խխորն յատաջ վինակ,
Եւ հետ նոյա խարպիզակ.
Սեխ եւ շերբնկ ճրմերուկ,
Փուքթով հասուցէք ըզդանակ։ Բարե՞

Ռեհին քաղցրիկ մանանայ,
Նոշ եւ շաքար միանայ.
Զաղուց մեղր ծաղրը բոլոր,
Մէջ սեղանին զօրանայ։ Բարեխօսեա՞

Սերկեւիլ թթուաշիկ,
Նուռն այլ ի հետ լինի քաղցրիկ.
Անուշ մաճակ տանձ մալաչի,
Ապասի եւ մէհրէնիկ։ Բարեխօսեա՞

Լան մեր գայ ղարանֆիլ,
Քաղցր տառչին եւ զանճաֆիլ.
Ղարապիպար ղալզուլայ,
Ճօվզ եւ բազում տառիֆլֆիլ։ Բարե՞

Տէրտէրնէրն եւ տիրացուքն,

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ N 26
44460 10

Յոլժամ սեղանոյս Հանդիպին,
Հընչեցնեն զանկ եւ զ ցընծղայս,
Երգեն զտաղն եւ զմեղեդին։ Բարե՞

Համ՝ թատերաց յառաջ գայ,
Զօնկուր դանպուրայ եւ շէթայ.
Ղարատուզն տուդայի,
Մուղնի փողնատին քամանչայ։ Բարե՞

Ցաւնէր պատեր զիս չորս դիմաց,
Եւ ես տկար էի մտաց.
Զայս չափ կարի ժողովեցի,
Որոնելով կամաց կամաց։ Բարե՞

Իւսեալ պատիւ զուարճացէք,
Մեծամեծք եւ տանուտէրք.
Կերէք արբէք ուրախացէք,
Այս չափըս բաւէ թէ գիտէք։ Բարե՞

Փառս տացուք ստեղծողին,
Այսչափ բարեաց պարգեւողին.
Աւրհնեա՛, տէր տէր, զհայր մեր յերկին,
Եւ զուք անձամբ յեկեղեցին։
Բարեխօսեա մեծ կարասին
Որ պատուական է խիստ գինին։

Քահանայ Անդրէաս Արծրէնցի խելագոր։

Տ՞ՐԼ Է ՎԵՐԱՅ ՎԱՐԱԳԱՅ ։

Վերթ Վանայ սարի թեւին,
Բազմեր պայծառ սիրուն Վարագ.
Այն ծաղկաւէտ փրթթեալ լերին,
Եօթնախորան նշուն Վարագ ։

Ծաղկունքն են բացվեր փարիշան,
Անուշահոտ գուլ եւ գուլշան,
Զարմանալի մեծ սուրբ նշան
Յայտնեցան ծայրագուն վարագ ։

Պատուական աւագ Սուրբ նշան,
Գալիլեայ յայտնեալ տեսան.
Հաւատացելոց լեր պահպան,
Ով ցանկալի անուն վարագ ։

Գլուխ բազում վանօրէից,
Անթոռ եւ թախտ քրիստոնէից.
Եօթնալոյս խորանաց յերկնից,
Ոման ինն եակ դասուցն վարագ ։

Վերին վարագ բարձր սարին,
Գեղեցկաշէն սուրբ տաճարին,
Լոյս կիջանէ ամէն տարի,
Գալիլայ գլխուն վարագ ։

Գալիլայ, տեղ զանազան,

Լ ցեալ ծաղկօք անմահական .
Մեղաւորաց ասպնջական .
Հատ շնորհօք անհուն վարդ ։

Երկոտասան սիւն լոյս ինջաւ ,
Փառօք խաչին որ յայտնեցաւ .
Հոտն անմահական բուրեցաւ ,
Ի մէջ եկեղեցւոյն վարդ ։

Ոսկի դուռն որ բարձին բերին ,
Ոտն է նշան զարկեր ջորին . (1)
Ճար անես տէր սէգիլ գրիգորին ,
Ով ցանկալի անուն վարդ ։

Տ՚ղ վրէի ե՛ պըլպո՛լէ ա՛ոյեալ գրէգո՛ր էն՛
Աշխա՛հարյո՛ց ըսպ ոյքո՛-բէնէց է վերջ՚ըն վա՛ննէն

Ծաղկունքն ասեն հերիք արա
Քանի կանչես վարդին վերայ .
Կահ ու պէկահ ձայնըդ կուդայ ,
Ի մեր պաղչէն ելիր գընա ։

Քանի առնէք դուք ինձ առապ ,
Սիրաս ի սիրուն եղեր քաղապ ,
Ես կու մաշեմ վարդին սապապ ,

---

(1) Ի՞նչէ՝ հիմայ ա՛ռանդո՛ւթիւմբ կանեն ըն . Ի ելքին Ի ա՛ստուգոյ ո՛ղի դո՛ռմը բերած ժամանակ , ջորիին ոտ խորիմը մէջ խրած է , որ՝ ոտն ոնչէ՝ հիմայ „ԾԱՂԿՈՒՆՔ՝ կասեն։

Իմ հալս առանց իւրն է խարաթ։

Գամ իջանեմ վարդենոյն տակ,
Չ կանանչ տերեւն առնեմ ինձ յարկ.
Ի սրտիս մէջըն կայ կրակ,
Թռչիմ եւ գամ երագ երագ։

Ի քեզ նայիմ աչօք անթարթ
Նա փարատի զինչ կայ հասրաթ.
Գեղեցկութիւն դրախտին եւ զարդ
Պալատ են քեզ ամենայն մարդ։

Վարդըն կասէ պըլպուլ երգէ,
Քաղցր ձայնիւ եղանակէ.
Ով որ ըզ քո ձայնդ լըսէ,
Նա հիանայ զմեզ երանէ։

Ով նենգութեամբ առնէ քեզ նազ,
Թող իւր աւուրք դառնայ նըւազ.
(Ամլի թուլայ բաշաթ դըլլազ,
Պըլպուլ պըգօթ ու պայաւաջ։)

(Գուրզան կըֆտանայ պըլպուլէ,)
Քանի կանչես մէկ պահ լըռէ.
Ասաց, թէ սէրըն կու նեղէ,
Որ վրայ վարդին աշըղ եղէ։

Սիրտս էրկայ հետ իւրըն հերթ,

Քանի խոցէք ՝՝ասէք թէ երթ.
Հոգմըն շարժէ ըզվարդին թեր թ,
Նա ի դողման դառնայ իմ լեր թ։

Այլ էի մընաց բընաւ յիս ուժ,
Երբ հեռանամ նա չունիմ ժուժ,
Ինձ օր մահու լինի եւ գուժ,
Հոտըն վարդին է սրտիս բուժ։

Զօրըն կենամ յերերմանի,
Քունն է հատեր ի գիշերի.
Աղաղակեմ արտասուալի,
Յայդոյս չերթամ ես այլ տեղի։

Դանկ վարդին որպէս ըզլալ,
Տեսաւ պըլպուլն եղեւ պէհալ.
Անմահութեան հոտըն բուրեալ.
Նա ի սիրոյն եղեւ արբեալ։

Վարդըն ետես զպըլպուլն ուրախ,
Որ ձայն կածէր ինքըն անահ.
Ծիծաղեցաւ վարդըն մէկ պահ,
Պայծառացաւ տիպըն քան զՁախ։

Վարդըն կարմիր գունով վառած,
Նաշահ պըլպուլըն ձայն էած.
Հոտոյն եղեւ խեվ ու հարբած,
Վարդի տեսուն էր կարօտած։

Պըլպուլն ասաց ես եմ առակ,
Թռչունքն կառնեն զիս առակ,
Վարդըն չընայիր ի յինքն երակ.
Նա ի յաչացս երաւ վրան։

Զօրն ի ճըղոյն լինիմ ի կախ,
Եւ միշտ դիտեմ զվարդին ահ,
Զոր որ տեսնում նա ինձ է մահ,
Զվարդըն քաղեն տանին անշաշ։

Վարդն է զգեցեալ գունով հանդերձ,
Ուրախանամ որ լինիմ մերձ.
Կասէ սիրով դու առիս դարձ։
Զահն եւ զերկիւղն ի յինէ բարձ։

Կասէ մառներ դու հետ ինձ խաղ,
Ես եմ կարմիր որաղ որաղ.
Զօրն ինձանէ յամպէն պաղ պաղ,
Վեր վերանիս իմոյ խաղաղ։

Վարդըն կասէ զձայնըդ քաղցրած,
Յերկիւանէ ես եմ հարբած.
Ծաղկանցն ամէն ես տարուբած,
Պայծառ գունով լուսաճաճանչ։

Դրիատ կառնէ ինքն յամէն ժամ,
Զկանանչ փարատէս յետ կուբանամ,
Ը զքեզ տեսնում ուրախանամ,

Ի՛ այլ ի քեզնէ ոչ հեռանամ ։

Պըլպուլն ըզվարդըն կու գովայ,
Յերիկանէ ձայնըն կուգա.
Ծաղկունքն ամէն են քեզ ծառայ,
Դու թագաւոր եւ տէր նոցայ ։

Պըլպուլըն զարդ մէջ գիշերին,
Վարդըն փթթի առաւօտին.
Ցօղն ի ջանէ վրայ թըփին,
Պայծառանայ գեղըն վարդին ։

Հուրջ ու բոլոր խուրեանըն փուշ,
Հոտըն բուրէ վարդին անուշ.
Թըմրաւ պըլպուլն եղեւ պէուժ,
Ասաց ինչ ժամ եղէ քեզ փուշ,

Եմուտ պըլպուլն ի վրան վարդոյ,
Թ'ես եմ գանկատ յանդէտ մարդոյ.
Թեր համբուրեմ ըզտիպըն քո,
Որ դուրանայ ցօղըս մարմնոյ,

Ես չուզեմ տէր հեռ քեզ վաղուց,
Զգարդ ու զպնալդ քեզ ճոխ ուսոյց.
Դու ես աղուր եւ վայելուչ,
Էր կու խոցես զիս առանց սուր ։

Զուխ ու զգիշեր եմ ես ի տապ,

Եղէ անշարժ որպէս ի կապ.
Լափած սրտիս ես դու շարապ,
Որ սեւացել է քան զառաջ։

Զայնէ պըլպուլըն անամաչ,
Ասէ կենա վարդըն կանանչ.
Ծաղկունքն ամէն ելնեն յառաջ,
Քան զօրաւոր արքային քաջ։

Դու պատուական աղուր ու թառ,
Լեզու չըկայ առնէ քեզ ճառ.
Պայծառ դունով ես միշտ ի վառ,
Քո թըշնամոյ սիրտըն քան զաղր։

Ի հեռ վարդին քանի դատիս,
Սիրով նորա դու միշտ մաշիս.
Ելք նա քաղցրիկ նայի ի յիս,
Զուարճանայ սիրտս ու հոգիս։

Ես կու այրիմ միշտ կրակով,
Թէ չառնում զվարդն վըրանով.
Էր կու մերժէք զիս կարօտով,
Ես կու գոլեմ զվարդն վըրանով։

Կասէ, չըկայ ի քեզ արատ,
Զէր աշխարհիս կենաս անհատ.
Ի փուրճանաց կենաս ազատ,
Կանանչ վըրան ու կամիր այդ։

Յամէն սապահ որ լուսանէր,
Պըլպուլըն ի վարդն ի սալամ գէր.
Ղումրին քաղցրիկ եղանակէր,
Ջվարդն եւ պըլպուլն ուրախ առնէր։

Հիտ պըլպուլին տրա զրուց,
Երբ որ գայցէ ինքն ի դրուց.
Ուրախութեամբ ըզքեզ սընոյց,
Ջնա ոլոշ է յայլ հաւուց։

Վարդն ի պըլպուլն երբ խօսեցաւ,
Այլ տրտմութեան հոգ չի տարաւ.
Քան թէ խնդաց ուրախացաւ,
Չի իւր սըրտի սէրըն լըցաւ։

Եղեւ պըլպուլըն թեւաթափ,
Թէ երբ ածեմ ըզվարդն է յափ.
Քանի փիղան կանչեմ այնչափ,
Ի դէմ վարդին հարկանեմ ծաՓ։

Ի ձեր սրտին դուք սէր չունիք,
Վասն այն զիմ ձայնըս չընդունիք.
Վարդըն կասէ մաներ հերիք,
Եա կու կանչեմ ե՛ունիմ կարիք։

Գերի գրիգոր անյիշելի,
Եւ անպիտան աղթամարցի,
Սէր աշխարհս սուր երկայրի,

Հոգիս նովաւ վիրաւորի։

Ամ՚ատուր մեծոփեցի,
Յինէն խընդրեաց եւ ես գրեցի.
Դուք ասացէք սրտով իմի,
Ինձ եւ նորա տէր ողորմի։

Թուական Հայոց ինըն հարիւր,
Նօթանասուն երկու ալ իւր.
. . . . օրինօք թիւր,
Զազգըս խանձեն որպէս զհուր։

Տաղ ի վերայ անուանի արբեցողաց։

Յորժամ գինոյ սուրահին գայ
Հարբեալ մարդն ուրախանայ.
Ամառուակըն պատրաստի գայ.
Առեալ գինին լցէ եւ տայ։

Յորժամ զմի գաւաթ խըմէ,
Ի միասին եալայ ասէ.
Բերան սակաւիկ մի ճմլէ,
Քան զՍողոմոն ճարտար խօսէ։

Յորժամ գաւաթն երկրորդէ,
Լաւ կերակուր կու կերցընէ.
Ընկանէ շատ շատ զրուցէ,
Ուրախութիւնըն յորդորէ։

Յորժամ գաւաթն երրորդէ,
Մաքառի եւ տրամաբանէ.
Իբրեւ վարթամ ձայնըն հանէ,
Ամենեցուն հրամայեցէ։

Յորժամ գաւաթն չորրորդէ,
Գոյն երեսին յոյժ կարմրէ.
Կոչէ, այս գինին թքթուէ,
Ո՞վ տանուտէր շուտով վազէ։

Յորժամ գաւաթն հինգերրորդէ,
Ջամամբ խօսէ եւ հրամայէ.
Որպէս չախկալ ձայն արձակէ,
Ծուռ ծուռ կոչէ եւ խաղ ասէ։

Յորժամ նա վեց գաւաթ խմէ,
Լեզուն բերան ոչ դառարէ.
Որպէս խելագար զրուցէ,
Յաչ եւ ըզձախն ոչ ճանաչէ։

Յորժամ նա եօթ գաւաթ խմէ,
Խպլիկ դեւըն վոր մըտանէ.
Բոլոր յօդուածք մարմնոյն դողդէ,
Խաղաղ նըստիլ ոչ հանդուրժէ։

Յորժամ նա ութ գաւաթ խըմէ,
Եւ զդատաւորքն յոյժ անարգէ.
Ոչ պէկ վաշայ կայ, ասէ,

Այլ ամենեցուն դէմ դընէ։

Յորժամ նա ինն գաւաթ խըմէ,
Ձեռքեր ոտքերըն տայ առնէ.
Բայց ոտին ոչ կանգնել կարէ.
Որպէս զանդամնալոյծ պառկէ։

Յորժամ տաս գաւաթ խըմէ,
Նա բարձերուն վրայ փըսխէ.
Մէջլխի տէրն գայ շոտ սըրբէ.
—Ղայֆայ եմէք բերէք խըմէ։

Յորժամ տասեւ մէկ գաւաթ խըմէ,
Բերան լեզուն ամուր փակուէ.
Իշմէրէթով ձեռօք խօսէ,
Յոյց տայ իշու դրախտն այս է։

Յորժամ տաս երկու թաս խըմէ,
Բազմատեսակ խայտառակէ.
Տըղայ մանկտի ուրախ առնէ,
Կոչեն, տեսէք, թէ ինչ խենթ է։

Յորժամ տաս երեք գաւաթ խըմէ,
Այս աշխարհէս նա հրաժարէ.
Ինքն իշու դրախտըն ժառանգէ.
—Ցանուտէր լըխէֆ բեր ծածկէ։

Առաւօտուն եւս հազըր է,

Ճըպռոտ աչքերով գայ ելատէ.
Սրայ փիլիզ չօրպայ պիտէ,
Այլ եւ թըթու ուտել պէտք է։

Բայց լաւ իրախկինըն շինէ,
Վասն այնորիկ զի մահմուտ է.
Մէկ գաւաթ լցէք որ խըմէ,
Թէ եկու տաք այլ նոյն խեղնթն է։

Թէ ունկ դընեն շատ կու խաջէ,
Երկիւղ չունի ոչ կամաչէ,
Ինքն զմարմին իւր կու ապաշտէ,
Ժամ եւ աղօթքն մոռացեր է։

Ղա Եզիդու նման քուրթ է.
Թէ ժամ երթայ եւ աղօթ է,
Ընծուց երեք բան խնդրէ,
Թուրթուն, իրախկի, գինին է։

Ողբ շարէպի ասայէտլ։

Ղա եւ թէ զարիպն ասեմ,
Խիստ դժուար առաջի տարին,
Թէ նուշ թէ շաքար ուտէ
Սիրտն է սեւ երեսն է դեղին.
Չի թէ իւր աշխարհն յիշէ,
Ողջ անձամբ լինի ցաւադին.

Մըտածէ սիրուն եղբայրք
սիրան այրէ յոյժ յոյժ դառնապին։
Էլնեմ դէպ երկիրս Նատեմ,
պահիկ մի ամիկս երեսխ.
Մի թէ հարաֆ մի գայ
որ հանդչի իմ զարիպ հոգիս։
Ո՞վ իմ ցաւն պատմել կարէ
որ այն չափ խասրաթ կայ սրտիս։
Սամիմ արկանել զիս գեռ,
որ առեալ տանէ ծովըն զիս.
Կեանքս աշխարհէս անցաւ,
բայց միայն Աստուած ունիմ յոյս.
Ակն ունեմ արժան առնէ,
տեսանելն ազնիւ սիրելոյս.
Ո՜հ, կասեմ, արիւն կուգայ,
շատ լալուս, հոգոց հանելուցս.
Անչափ ախ ու ո՜հ ասի
վախենամ ելնեմ աչուերուս,
Եւ թէ մարդ մարդոյ անիծէ
թող ասէ թէ զարիպանաս։
Ի զարիպութիւն երթաս
զարիպի հալըն գիտենաս,
Սալըն քեզ սընարք լինի
աւազի մէջըն դուրանաս,
Զի թէ քո աշխարհն յիշես,
արտասուօք ըզ քեզ լուանաս։
Զարիպ եմ օտար երկիր

սիրտս նեղի կեանքս ըսպառի.
թէ սրտիս խասրաթն ասեմ,
ապառաժ քարերն պատառի։
Ընչուերս իբրեւ զամպն ուռեր,
երեսէս ի վայր կու թափի.
Սիրտն իմ քան ըզ կուժ կոտրեր,
քանի ջուր չնուն կու տանի։
Ո՞վ իմ արարիչ Աստ
մի առներ իմ մահն ի սիրոյ.
Իմ մահն պատերազմն արայ
մէջ հազար թափած թրերոյ։
Մարդն խասրաթիվ մեռնէ,
չէ պատահ ի հող թաղելոյ.
Մարդն պատերազմն մեռնէ
պարտ է վերայ վանք շինելոյ։
Սարերն ամէն ճիւն էկեր
ստորերու վէրքն վերացեր,
Ղա ճայն ի ճղերն առեր՝
ծառն զիւր տերեւն է թափեր.
Ամէն հաւն իւր ընկեր գտեր
ես եմ մորրեր,
Ամէն քարն իւր տեղն դատարեր,
ես եմ գըլորեր։

Աշըղ Ներսէսայոս Վանեցի։

ՀԱՅ.ՄԵՏ.ԳՐՍԱՍԵՆ
ԵՐԵՎԱՆ

ЧЦР
№ 1026